Արձանագրություն N 2-1
<<ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/5>> ծածկագրով համակարգիչ ամբողջը մեկում և սմարթ քարտեր կարդացող սարքերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09.08.2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Սարիբեկյան
Գ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Լ. Խալաթովա

1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Հայտերի ներկայացման վերջնաժամկետը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում սահմանվել է մինչև 08.08.2022թ. ժամը 11:00-ն: Աճուրդը կայացել է eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 09.08.2022թ. ժամը 11:00-11:30-ը:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

N	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
Չափաբաժին N1 համակարգիչ ամբողջը մեկում									
1	Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	1158000	965000	20 %	1158000	965000	20 %	1158000	
2	ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ		1000000000	0 %	1000000000	1000000000	0 %	1000000000.00	Մերժված
Չափաբաժին N2 սմարթ քարտեր կարդացող սարքեր									
1	ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ	30000	1000000000	0 %	1000000000	1000000000	0 %	1000000000.00	Մերժված

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Քանի որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ընկերության ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային արժեքը, համակարգն ավտոմատ եղանակով մերժել է մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը՝

1. Լիազորագրի մասով՝

Լիազորագիրը տրվել է այլ պատվիրատուի և այլ գնման ընթացակարգի համար:

2. Դիմում-հայտարարության մասով՝

- Դիմում-հայտարարության մեջ սխալ են նշված Պատվիրատուի անվանումը և գնման ընթացակարգի ծածկագիրը, իսկ մասնակցի անվանումը <<ռուսերեն լեզվով անվանումն է>> դաշտում լրացված է հայերեն:
- Էլեկտրոնային թվային ստորագրությունն ակտիվ չէ:

3. Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մասով՝

- Տեխնիկական բնութագիրը հստակ չէ նկարագրված (մասնավորապես՝ առնվազն բառը և հրավերի բնութագրում նշված պարտադիր պայմանները կրկնվում են ներկայացված հայտով): Անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի պարամետրերը, նկարագիրը:
- Նշված չէ սպասարկման կենտրոնի հասցեն:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 10.08.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

4.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 11.08.2022թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Տ. Ղուկասյան

Անդամներ՝ _____ Լ. Սարիբեկյան

_____ Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Նիկոլայան